կաթողիկէ ժողովուրդը՝ որբ, անտէր և առանց հովիւի չմնայ։

Մեծ յոյս ունինք որ դուք յանուն պայծառութեան սուրբ եկեղեցւոյ և Աբհ. Ճնոյեան Հայր Ներսէսի ի Տարօն վախճանելոյն յիշատակին համար՝ պիտի բարեհաճիք ևս առաւել հաստատել և առաջ տանիլ Միխիթարեան վարժարաններն Մշոյ մէջ, վասն յառաջադիմութեան Հայ ազգիս և ի պայծառութիւն Հայ–Կաթողիկէ Հասարակութեան։

Ի փառս և ի պարծանս երջանկայիշատակ Հօրն մերոյ մեծին Միխիթարայ Աբբահօր։

Տարօնոյ Հայ ժողովուրդը չ՚մոռնար Ձեր բարիքները, այլ ի վերայ սրտից ոսկեղէն տառերով գրած, անջնջելի և անմոռանալի պիտի պահէն Ձեր անմահ յիշատակները. և կ՚աղօթեն յաւէտ որ տայ Աստուած և պարգևէ խաղաղութիւն, յառաջադիմութիւն և յարատևութիւն ամբողջ միաբանութեան ուխտիդ Միխիթարայ. և մշտակաց և անսասան պահեսցէ մինչև ի կատարած աշխարհիս։

Գերապատիւ Տեարդդ սուրբ և երկնատուր օրհնութիւնը հայցելով, և սրբասնեալ աջոյն Ձերում խոնարհելով ի համբոյր՝ և յանձնելով զմեզ Ձեր սուրբ աղօթից, եմք և կը մնամք

Աբհի. Գեր. Տեարդդ՝

Խ. Քոյր Մարիանէ Զաքարեան
Վահան վրժպտ. Աբրահամեան
Ուսուցիչ Միխ. Վարժարանին Նորշէնի

Մուշ (Նորշէն)

ՀԱՅՐԵՆԻՔ Շաբաթական գրական, Հասարակական, Քաղաքական. — Բաժանորդագրութիւնն է Ամերիկա. Տարեկան 2 տոլար. — Արտասահման 10 ֆր.

Հասցէն Rédaction Haïrenik
9 Knapp St.
Boston, Mass. (U. S. A.)

ԱՏԱՆԱՅԻ ՈՐԲԻԿԸ

— Անօթի՞ եմ, կը մրսիմ...

Ողբացեալ Ց. Պապիկեանի մահը կրկին մեզի կը պատկերացնէ Ատանան՝ բոցերու և արիւններու մէջ։ Ատանայի Ջարդը խոր խոցեց հայ սրտերը, և ան՝ համեմատութեամբ քիչ զոհերով՝ կսկծեցուց զմեզ այնքան՝ որքան տասն և հինգ տարի անընդհատ ջարդուած հայութիւնը։

Կը յիշեմ Մարտի 31ի դէպքերը երբ Սելանիկեան Ազատարար բանակը Պոլիս մտաւ. ինն ամսեայ կապկպուած Ազատութիւնը փրկելու Համիտի ճիրաններէն՝ վասն. Շէվքէթ փաշան Իզմիտի Հրամանատարէն զինուոր խնդրեց. և հայասէր Հրամանատարը ակնարկով մը իր շուրջ